ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ԱԶԳԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մարդու և հասարակության ծագման ու զարգացման օրինաչափությունների հետազոտումը հեռագույն ժամանակներից ի վեր գիտական միտքն զբաղեցնող հիմնական պրոբլեմներից է։ Անցյալ դարի երկրորդ կեսին որպես գիտության ուրույն բնագավառներ ձևավորված մարդաբանությունն ու ազգագրությունը արագորեն բուռն զարգացում ապրեցին՝ մարդաբանական հետազոտություններով բացահայտվեցին բանական մարդու (Homo sapiens) գոյացման ու նրա տիպի հետագա փոփոխությունների, ռասաների առաջացման, տեղաբաշխման ու վերափոխման բարդ ու դժվարին պրոբլեմատիկ հարցերը, ազգագրական հետազոտությունները հավաստի հիմք հանդիսացան մարդկային հասարակության վաղնջագույն կացութաձևերի ու մշակույթների առաջացման ու զարգացման իրական պատկերը բացահայտելու համար։

Գիտության միմյանց հետ սերտորեն շաղկապված այս երկու բնագավառի աշխատողների ջանքերը ավելի նպատակասլաց դարձնելու, փոխադարձ կապերը ամրապնդելու և հետազոտությունների արդյունքները մարդկության առաջընթացին ծառայեցնելու աղնիվ մղումով, 1933 թ. Բազելում (Շվեյցարիա) կայացած միջազգային կոնֆերանսը որոշեց չորս տարին մեկ անգամ գումարել մարդաբանական և ազգագրական (կամ ազգաբանական) գիտությունների միջազգային կոնգրես՝ այս կամ այն երկրում, ինչպես Հին աշխարհում, նույնպես և Նոր աշխարհում։ 1934 թ. Լոնդոնում գումարված առաջին կոնգրեսը սակավաթիվ մասնակիցներ ունեցավ՝ շուրջ 200 մարդ[1], իսկ 1960 թ. Փարիզում գումարված 6-րդ կոնգրեսին արդեն մասնակցում էր շուրջ երկու հազար գիտնական։ Հենց Փարիզի կոնգրեսում էլ խորհրդային պատվիրակությունը սիրով ստանձնեց հաջորդ կոնգրեսի անցկացման կազմակերպումը մեր երկրում։

Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային 7-րդ կոնգրեսը կայացավ սույն թվի օգոստոսի 3—10-ը Մոսկվայում, Լոմոնոսովի անվան համալսարանի գլխավոր շենքում (Լենինյան բլուրներ)։ Կոնգրեսի բարեխիղճ, բոլոր մանրամասներով մտածված նախապատրաստումը շատ բանով կանխորոշեց նրա հաջող ընթացքն ու արդյունավետ ավարտը։

Մոսկովյան կոնգրեսը մարդաբանների ու ազգագրագետների, ինչպես նաև հարակից մի շարք գիտությունների ներկայացուցիչների՝ ժողովրդական բժշկությամբ ու դեղագործությամբ, հնագիտությամբ ու հասարակագիտությամբ, բարբառագիտությամբ ու բանագիտությամբ, ժողովրդական երաժշտությամբ, պարարվեստով ու կիրառական արվեստներով զբաղվողների մի մեծ միջազգային համաժողով էր, ամենաներկայացուցչականը բոլոր նախորդների համեմատությամբ. դրան մասնակցում էր շուրջ 2200 պատվիրակ աշխարհի բոլոր մայրցամաքների 58 երկրից և մի քանի հարյուր հյուր՝ ընդամենը ավելի քան 2500 գիտնական։ Սույն կոնգրեսում, ավելի քան նախորդներում, արտահայտություն էին գտել աշխարհի ժողովուրդների կյանքում կատարված արմատական փոփոխությունները՝ կոնգրեսին, որպես լիիրավ գիտնական-պատվիրակներ մասնակցում էին Ասիայի, Աֆրիկայի ու Հարավային Ամերիկայի տարբեր ռասաների պատկանող մի շարք այնպիսի երկրների ու ժողովուրդների ներկայացուցիչներ, որոնք անցյալում բացառապես եղել են օտարերկրյա գիտնականների ուսումնասիրման առարկա։

Ողջունելով կոնգրեսի բացումը, Խորհրդային Միության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Կ. Ն. Ռուդնևը հատկապես ընդգծեց, որ մենք ապրում ենք հեղափոխական վերափոխումների բուռն ժամանակաշրջան։ Սոցիալիստական երկրների ձեռք բերած վիթխարի հաջողությունների շնորհիվ, սոցիալիստական դաղափարներն ավելի ու ավելի են նվաճում մարդկանց սրտերն ու մտքերը, փլուզվում է դաղութակալության արդահատելի սիստեմը, նորանոր երկրներ ու ժողովուրդներ ձեռք բերելով անկախություն և ազատություն, կառուցում են իրենց

---

[1] *Երկրորդ կոնգրեսը տեղի է ունեցել 1938-ին, 3-րդը՝ 1948-ին, Բրյուսելում (Բելգիա), 4-րդը՝ 1952-ին, Վիեննայում (Ավստրիա), 5-րդը՝ 1956-ին, Ֆիլադելֆիայում (ԱՄՆ)։*

պետականությունը, տնտեսությունն ու մշակույթը։ Գնալով միջազգային ասպարեզում նշանակալից ուժ են դառնում նոր զարգացող երկրները, լայնորեն ծավալվում է պայքարը մարդկանց ազատության, հավասարության ու երջանկության համար, աճել է փոխադարձ ըմբռնումը ժողովուրդների միջև, մեծ նշանակություն է ստացել պայքարը խաղաղության համար։

Կոնգրեսն ընթանում էր այն նշանաբանով, որ մարդու և մարդկային հասարակության կյանքով ու մշակույթով զբաղվող գիտնականները պետք է հավերժ բարձր պահեն ազնիվ պարտքի խոր գիտակցումը հասարակության, մարդկության հանդեպ, ամեն կերպ նպաստեն ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, վճռականորեն մերժելով այն ամեն շինծուն ու մտացածինը գիտության մեջ, ինչը խանգարում է այդ վեհ նպատակի իրականացմանը։

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահ Մ. Վ. Կելդիշը իր ելույթում ընդգծեց իսկական գիտության անհամատեղելիությունը ամեն կարգի, էապես հակամարդկային բարբաջանքների քարոզի հետ որոշ ժողովուրդների ռասայական ոչ լիարժեքության, մյուսների ռասայական գերազանցության վերաբերյալ, կեղծ գիտական տեսություններ, որոնք նպատակ են հետապնդում ոչ թե միավորելու մարդկանց, այլ նրանց անջատելու միմյանցից և հակադրելու միմյանց։

Այսպիսով, կոնգրեսի աշխատանքները ընթանում էին միանգամայն բարենպաստ պայմաններում։

Մյուս կողմից էլ, կոնգրեսի գումարումը սոցիալիստական մեծ տերության մայրաքաղաք Մոսկվայում և խորհրդային գիտնականների զանգվածային մասնակցությունը դրա աշխատանքներին, մեծապես շարժում էր օտարերկրյա բազմաթիվ գիտնականների բուռն հետաքրքրությունը, որն ուներ երկու էական կողմ՝ հետաքրքրություն խորհրդային հասարակական գիտությունների մեթոդաբանական հիմունքների, գլխավոր ուղղությունների ու կոնկրետ մեթոդների նկատմամբ, և հետաքրքրություն խորհրդային հարյուրից ավելի ժողովուրդների մարդաբանական ու ազգագրական ուսումնասիրության բնագավառում բազմազգ գիտնականների համատեղ աշխատանքի փորձի ու նվաճումների նկատմամբ։

Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային միության նախագահ, վեցերորդ կոնգրեսի նախագահ, ֆրանսիական ակադեմիկոս գիտնական Անրի Վալուան արտասահմանյան պատվիրակների անունից ողջունելով 7-րդ կոնգրեսի մասնակիցներին, գոհունակություն հայտնեց հատկապես այն բանի համար, որ կոնգրեսը լայն հնարավորություններ է ընձեռել բազմակողմանիորեն հաղորդակից լինելու խորհրդային մարդաբանների ու ազգագրագետների աշխատանքներին, որոնք աչքի են ընկնում պրոբլեմների լայն ընդգրկմամբ և որոնք շատ նոր բան են ներդնում համաշխարհային գիտության գանձարանը։

7-րդ կոնգրեսի նախագահ, խորհրդային ակադեմիկոս գիտնական Ս. Պ. Տոլստովը իր զեկուցմամբ ամփոփեց խորհրդային մարդաբանների ու ազգագրագետների նվաճումները, բնութագրեց մեզ մոտ կատարվող աշխատանքների հիմնական ուղղությունները և դրանցից բխող խնդիրները, հատկապես շեշտելով գիտության այդ բնագավառների շրջադարձը դեպի արդիականություն։ Գիտնականը չի կարող դուրս մնալ ժողովուրդների կյանքում տեղի ունեցող բուռն փոփոխությունների ոլորտից։ Ավելին, նա ոչ միայն պետք է լուսաբանի ժողովուրդների պատմության անցյալ ու նոր եղելությունները, այլև պատասխան տա մարդկանց և հասարակության կյանքի առաջադրած հրատապ հարցերին։

Մոսկովյան 7-րդ կոնգրեսը ամենից ներկայացուցչական էր ոչ միայն մասնակիցների բազմաթվության, այլև պրոբլեմների ընդգրկման բազմազանության առումով։ Պատկերացում կազմելու համար նշենք, որ միայն զեկուցումների թիվը անցնում էր հազարից, ըստ որում խորհրդային գիտնականները հանդես եկան շուրջ չորս հարյուր զեկուցումով։ Ծավալուն օրակարգում ընդգրկված էր մարդու, հասարակության և մշակույթի ամենաբազմազան հարցերի ուսումնասիրման արդյունքները՝ սկսած վաղագույն ժամանակներից մինչև այսօրվա գիտական և հասարակական կարևորություն ներկայացնող պրոբլեմները։ Նախքան բուն կոնգրեսի բացումը, օգոստոսի մեկին և երկուսին, տեղի ունեցան մարդու կենսաբանության ստանդարտացման միջազգային կոմիտեի նիստերը, որոնց ընթացքում փոխադարձորեն համաձայնեցվեցին տարբեր երկրների մարդաբանների կողմից մշակված չափանիշ-սկզբունքները մարդու կենսաբանության օրինաչափությունների վերաբերյալ։

Բուն կոնգրեսի աշխատանքները բաժանված էին պլենար, սեկցիոն նիստերի ու սիմպոզիումների։ Կայացավ չորս պլենար նիստ, որից երկուսը նվիրված էր կոնգրեսի բացմանն ու փակմանը, իսկ մեկական նիստերում լսվեցին պրոֆ. Պ. Բիսվասի (Հնդկաստան) զեկուցումը՝ «Ռասայական և կաստայական տարբերությունների առնչակցության պրոբլեմի արդի վիճակը Հնդ-

կաստանում» և պրոֆ. Ֆ. Գանդևի (Բուլղարիա) զեկուցումը՝ «Արդի կենցաղի ուսումնասիրման հաջողությունները Եվրոպայի սոցիալիստական երկրներում» թեմաներով։ Երկու զեկուցումներն էլ մեծ կարևորություն էին ներկայացնում քննարկվող պրոբլեմների խիստ արդիականության և գիտահետազոտական փորձի ընդհանրացման առումով։ Օգոստոսի 3-ին և 9-ին կայացան նաև Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային կոնգրեսների մշտական խորհրդի նիստերը, իսկ դարձյալ օգոստոսի 9-ին՝ Մարդաբանական և ազգագրական գիտությունների միջազգային միության նիստը, որոնցում քննարկվեցին գիտա-կազմակերպական հարցեր, կապված տվյալ կոնգրեսի ընթացքի և մարդաբանների ու ազգագրագետների առաջիկա տարիների գործունեությանն ընդհանուր ուղղություն տալու խնդիրների հետ։

Կոնգրեսի աշխատանքները հիմնականում ընթացան սեկցիաներում ու սիմպոզիումներում։ Գործում էր 27 սեկցիա, որոնց նիստերը կայացան օգոստոսի 4—7-ը, և 17 սիմպոզիում, որոնց նիստերը կայացան օգոստոսի 8-ին և 10-ին։ Դրանց հենց միայն հակիրճ թվարկումը կարող է տալ Կոնգրեսի կազմի, քննարկված հարցերի շրջանակների ու բնույթի պատկերը։ Կոնգրեսն ուներ երկու հիմնական ուղղություն՝ մարդաբանություն և ազգագրություն, իրենց հարակից բնագավառներով։ Գործում էին մարդաբանական հետևյալ սեկցիաները՝ ֆիզիոլոգիական մարդաբանություն, մարդու մարմնաբանություն, անատոմիական մարդաբանություն, էթնիկական մարդաբանություն, հնամարդաբանություն և մարդու ծագումը։

Ազգագրության բնագավառը առավել հարուստ ու բազմազան էր ներկայացված։ Գործում էին թեմատիկ և աշխարհագրական հետևյալ սեկցիաները՝ թեմատիկ՝ տեսություն և մեթոդաբանություն, հասարակական կարգ, նյութական մշակույթ, հնէազգագրություն (հնագիտական ազգագրություն), էթնոբուսաբանություն և էթնոկենդանաբանություն, էթնոլեզվաբանություն, ժողովրդական բանավոր ստեղծագործություն, ժողովրդական երաժշտություն, ժողովրդական թատրոն և պարարվեստ, ժողովրդական կերպարվեստ, կրոնական հավատալիքներ և դիցաբանություն, կիրառական ազգագրություն, էթնիկական աշխարհագրություն, աշխարհագրական՝ Աֆրիկա, Ավստրալիա և Օվկիանիա, Արևելյան և Հարավային Ասիա, Արևմտյան Ասիա, Արկտիկա և Մերձարկտիկա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային և Կենտրոնական Ամերիկա, Եվրոպա։ Վերջապես ուրույն սեկցիա էր թանգարանագիտական սեկցիան։

Կոնգրեսի աշխատանքներում շատ կարևոր տեղ էին գրավում սիմպոզիումները, որոնք, հասկանալի է, կրում էին հիմնականում թեմատիկ բնույթ և նվիրված էին առանձին պրոբլեմատիկ հարցերի քննմանը։ Նկատի առնելով սիմպոզիումների կարևորությունը, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել դրանց ցուցակը[2]։

Սեկցիաների ու սիմպոզիումների նիստերին զուգընթաց, երկու դահլիճում, ցուցադրվում էին խորհրդային և արտասահմանյան կինոնկարներ՝ ազգագրական, մարդաբանական և հնագիտական բնույթի, որոնք նույնպես գիտական նշանակալից հետաքրքրություն էին ներկայաց-

---

2 Գործում էին հետևյալ սիմպոզիումները.

1. Մորգանի ուսմունքը նախնադարյան հասարակության պարբերացման մասին՝ արդի ազգագրության լույսի տակ։
2. Վաշկատուն և նստակյաց բնակչության փոխհարաբերությունները։
3. Քաղաքի և արդյունաբերական ավանի ազգագրությունը։
4. Երկրագործական ազգագրություն (գյուղգործիքներ, տեխնիկա և այլն)։
5. Հին և այժմյան ժողովուրդների էթնոգենեզի պրոբլեմը։
6. Արկտիկական գոտու ազգագրության և մարդաբանության պրոբլեմները։
7. Անապատային գոտիների ազգագրության և մարդաբանության պրոբլեմները։
8. Ազգագրական ատլասների կազմման մեթոդիկան։
9. Խաղաղօվկիանոսյան ավազանի պատմա-մշակութային կապերը։
10. Կարպատյան պատմա-ազգագրական ընդհանրությունը։
11. Ժողովրդական արվեստի հավաքչական աշխատանքի և նյութերի հետագա մշակման մեթոդիկան։
12. Բանավոր բանաստեղծական ժանրերի դասակարգումը։
13. Ժողովրդական երաժշտական գործիքները։
14. Բանվորական բանահյուսությունը։
15. Մարդաբանական վերլուծության մեթոդները, ռասայական հատկանիշների կազմավորման գործոնները և ռասայական դասակարգման սկզբունքները։
16. Բրածո մարդակերպ էակների սիստեմավորումը և չափահանումը։
17. Կենդանու և մարդու միջև եղած սահմանագծի պրոբլեմը։

նում։ Նման պայմաններում կոնգրեսի մասնակիցները, բնական է, չատ լարված էին աշխատում, այսուհանդերձ, հնարավոր էր լինում անմիջականորեն հաղորդակից դառնալ միայն իրենց խիստ մասնագիտորեն հուզող հարցերի քննարկմանը, նիստերից հետո միայն որոշ չափով տեղեկանալով մյուս սեկցիաներում ու սիմպոզիումներում կատարված աշխատանքի մասին։ Ուստի և շահում էին այն պատվիրակությունները, որոնք առավել բազմանդամ էին։ Վերջին հանգամանքը նպաստում էր նաև ավելի գործուն մասնակցությանը ամենօրյա քննարկումներին։

Հայաստանի պատվիրակությունը կազմված էր 26 հոգուց, որոնցից 16-ը հանրապետության գիտությունների ակադեմիայի սիստեմի հիմնարկներից, 10-ը՝ գիտական այլ հաստատություններից։ Մեր պատվիրակությունը կոնգրեսում հանդես եկավ 7 զեկուցումով և գործուն մասնակցությամբ սեկցիաների ու սիմպոզիումների աշխատանքներին։ Մեր ներկայացրած զեկուցումները զգալի հետաքրքրություն առաջացրին համապատասխան սեկցիաներում։

Ուշադրավ էր, հատկապես, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Սուրեն Երեմյանի զեկուցումը «Կովկասյան լեռնական ժողովուրդների տեղաբաշխումը բուն Պտղոմեոսի և 7-րդ դարի հայ աշխարհագրության թեմայով։ Զեկուցողը 7-րդ դարի հայ հեղինակի կազմած և մինչև այժմ գիտական լայն շրջաններին անհայտ «Աշխարհացույցի» նյութերով նշանակալի ճշգրտումներ մտցրեց և լրացումներ կատարեց Կովկասի լեռնական ժողովուրդների, ցեղերի ու ցեղախմբերի տարածման շրջանների ու բնակավայրերի որոշման խրթին հարցերի մեջ, որով, ինչպես նշվեց նիստի ժամանակ, անհամեմատ հարստացրեց Պտղոմեոսի բարտեզից հայտնի մեր գիտելիքները այդ ժողովուրդների մասին։ Առանձին հետաքրքրություն առաջացրին մանավանդ զեկուցողի կազմած Կովկասի ժողովուրդների տեղաբաշխման երկու քարտեզը։

«Հայ ժողովրդի պարային և թատերական ֆոլկլորը» արժեքավոր թեմայով զեկուցում կարդացց պատմական գիտությունների դոկտոր Սերուճի Լիսիցյանը, հաղորդելով իր բազմամյա փորձն ու գիտելիքները համապատասխան նյութերի գրառման, գրանցման ու մշակման բնագավառում։ Հետաքրքրություն մեծ էր մանավանդ հեղինակի ստեղծած պարի գրառման նշանների ու սիստեմի նկատմամբ, քանի որ համեմատաբար սակավաթիվ նշաններով հնարավոր է դառնում բավականին ճշգրտորեն գրանցելու մարմնի պարային բարդ շարժումները՝ հնարավոր մանրամասներով։

Պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ Դերենիկ Վարդումյանի զեկուցման թեման էր՝ «Հայաստանի հիմնական ազգագրական շրջանների բնութագրումը 19-րդ դարում»։ Զեկուցումը կառուցված էր հայ ժողովրդի նյութական մշակույթի, հատկապես ժողովրդական բնակարանի և արտադրական օժանդակ շենքերի կոմպլեքսային բաղդատական տվյալների, ինչպես նաև հարակից այլ նյութերի (տարազ, կիրառական արվեստ և այլն) համադրական հետազոտությամբ։ Ազգագրական շրջանների բնութագրումը ժողովրդական մշակույթի նյութերով առաջին անգամն է կատարվում Հայաստանում, ուստի զեկուցումը զգալի հետաքրքրություն շարժեց։

«Հայկական ժանյակները և դրանց տարածումը», այսպիսին էր արվեստի ինստիտուտի ավագ գիտական աշխատակից Սերիկ Դավթյանի զեկուցման թեման։ Զեկուցողը իր ներկայացրած հարուստ նյութերով ու դրանց հանգամանալից վերլուծմամբ ներկաներին ոչ միայն լիովին համոզեց հայկական ձեռարվեստի այդ ճյուղի նրբության ու կատարելության մեջ՝ դրսևորված ազգային յուրատիպ ձևերում, այլև ցույց տվեց դրանց լայնորեն տարածված լինելը Առաջավոր Ասիայում, իսկ համաշխարհային առաջին պատերազմից հետո՝ նաև Եվրոպայում ու ամերիկյան մայր ցամաքի երկրներում։

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Իորեսն Աբայանի զեկուցումը նվիրված էր «Կոմիտասը որպես հայ երաժշտական ֆոլկլորի հավաքող և ուսումնասիրող» թեմային։ Զեկուցումը, որն ուղեկցվում էր հայ գեղջկական երգի Կոմիտասի, Շահմուրադյանի և ուրիշների դմայլելի կատարումներով, խոր տպավորություն թողեց մասնագետների վրա, որոնցից, հատկապես ստարերկրացիներից շատերը, առաջին անգամ հաղորդակից եղան հայ երգին և ծանոթացան Կոմիտասի մշակման դասական փորձին, որը հմտությամբ ներկայացրեց Ռ. Աբայանը։

Դասակարգային պայմաններում վերափոխված տոհմային-ազգակցական հարաբերությունների վերապրուկային դրսևորման հետազոտությանն էր նվիրված պատմական գիտությունների թեկնածու, ազգագրագետ Էմմա Կարապետյանի «Պատրոնիմիական հարաբերությունների մնացուկները հայերի մեջ (19-րդ դ. 2-րդ կես—20-րդ դարի սկիզբը)» զեկուցումը։ Գրոբլեմի հետազոտումը, որն առաջադրվել ու մշակվել է խորհրդային ականավոր ազգագրագետ պրոֆ

Մ. Օ. Կոսվենի կողմից, հայկական նյութերով պատշաճ քննության է ենթարկվել զեկուցողի կողմից, արժանանալով մասնագիտական շրջանների ուշադրությանը։

«Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական ֆոնդերը» խորագիրն էր կրում պատմության թանգարանի ավագ գիտական աշխատակից Նագելի Ավագյանի զեկուցումը։ Հայ ժողովրդի մշակութային գանձարաններից մեկի՝ թանգարանի ֆոնդերի հակիրճ, բայց բովանդակալից ներկայացումը կոնգրեսին զեկուցման նպատակն էր, որը և արվեց հաջողությամբ։

Զեկուցումներից բացի, Հայաստանի պատվիրակության անդամները գործուն մասնակցություն ցուցաբերեցին սեկցիաների ու սիմպոզիումների աշխատանքներին, քննարկվող հարցերի առթիվ հանդես գալով ելույթներով։

Նրանք սիմպոզիումներում առաջ քաշեցին տեղային և ընդհանուր մշակույթների բնութագրման և փոխներգործության (փիլիսոփայական գիտությունների թեկնածու Է. Մարգարյան), երկրագործական գործիքների համաձայնեցված հետազոտման և բոլորի կողմից ընդունելի տերմինաբանության մշակման (պատմական գիտությունների թեկնածու Վ. Բդոյան), ազգագրական ատլասների կազմման ընդհանուր սկզբունքների ու մեթոդների մշակման (ավագ գիտական աշխատակից Դ. Վարդումյան), ժողովրդական արվեստների նյութերի կոմպլեքսային հավաքման ու ուսումնասիրման (արվեստագիտության թեկնածու Ս. Դավթյան), քաղաքային ազգագրության կոմպլեքսային մշակման (կրտսեր գիտական աշխատակից Կ. Սեղբոսյան) դեռևս բանավեճերի տեղիք տվող ուշագրավ հարցերը և համապատասխան առաջարկներ մտցրին ընդհանուր փոխըմբռնման հասնելու համար։

Արվեցին նաև մի շարք էական դիտողություններ որոշ զեկուցումների վերաբերյալ։ Պրոֆ. Բ. Առաքելյանը վիճարկելով Փոքր Ասիայում 8—9-րդ դարերում թուրքացման պրոցեսը սկսված լինելու տեսակետը, գտնում էր, որ որքանով խոսքը վերաբերում է էթնոգենեզի բարդ պրոցեսների մի ամբողջ կոմպլեքսի, մինչև սելջուկյան ներխուժումը Փոքր Ասիայի թուրքացման մասին խոսելը զուրկ է փաստական և գիտական հիմքից։ Ավագ գիտական աշխատակից Է. Կարապետյանը կարևոր դիտողություններ արեց ընտանեկան համայնքի բնութագրման և էական հատկանիշների վերաբերյալ։ Ավագ գիտական աշխատակից Ս. Լիսիցյանը նախագահելով ժողովրդական թատրոնի և պարարվեստի սեկցիայի նիստերից մեկում, ամփոփեց օրվա աշխատանքը և դիտողություններ արեց վիճելի հարցերի առթիվ։

Կոնգրեսի ընթացքում անձնական և խմբական շփումներ եղան տարբեր երկրների գիտնականների միջև։ Հատկապես զգալի էր հունգարական, բուլղարական, չեխական, հարավսլավական և այլ երկրների գիտնականների հետաքրքրությունը հայ ազգագրության և առհասարակ հայ մշակույթի նկատմամբ։ Այս հետաքրքրասիրությանը գոհացում էր տրվում հանդիպումների ու զրույցների միջոցով, որոնք անցնում էին ջերմ ու բարեկամական մթնոլորտում։

Կոնգրեսի առթիվ կազմակերպված ցուցահանդեսին, ի թիվս միութենական մի քանի այլ հանրապետությունների (Ուկրաինա, Ուզբեկստան, Ղազախստան, Վրաստան), մասնակցում էր նաև Հայաստանը՝ գեղանկարիչ-ազգագրագետ Ա. Պատրիկի կազմած 19-րդ դարի հայ ժողովրդական տաբազային գունազարդ քարտեզով, հայկական ժանյակների ցուցանմուշներով և ազգագրական հրատարակություններով։ Ինչպես մեր ներկայացրած ցուցադրական նյութերը, նույնպես և «Բացօթյա թանգարան» հնագիտական բնույթի կինոնկարը արժանացան կոնգրեսի մասնակիցների ուշադրությանը, իրենց հերթին որոշ չափով լրացնելով նրանց պատկերացումները հայ ժողովրդի հնադարյան հարուստ մշակույթի մասին։

Կոնգրեսը սկզբից մինչև վերջ ընթացավ գիտնականների փոխադարձ ըմբռնման և համագործակցության, գիտությունը մարդկությանը ազնվորեն ծառայեցնելու ձգտման ոգով։ Եղան, հարկավ, նաև սուր բանավեճեր մասնավորապես Մորգանի ուսմունքի գնահատման և նախնադարյան հասարակության պատմության պարբերացման ու մի շարք այլ հարցերի շուրջը, սակայն հատկանշական է, որ ռասայական տեսության կամ որևէ արարքի դրսևորումներ չեղան, չնայած կոնգրեսին մասնակցում էին բոլոր ռասաների ներկայացուցիչներ և քննարկվում էին աշխարհի շատ ժողովուրդների ու մշակույթների վերաբերող բազմաթիվ ու բազմազան փափուկ հարցեր սոցիալիստական և կապիտալիստական երկրների գիտնականների կողմից։ Իշխում էր գիտական փոխըմբռնման հասնելու ոգին, որն էլ կոնգրեսի կարևորագույն արդյունքը պետք է համարել։

Հաջողությամբ ավարտելով Մոսկվայի 7-րդ կոնգրեսի աշխատանքները, առաջարկվեց Մարդաբանական և ազգագրական գիտությունների հաջորդ՝ 8-րդ միջազգային կոնգրեսը հրավիրել 1968 թ., Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյում։ Այս առաջարկությունը արժանացավ կոնգրեսին մասնակից գիտնականների լիակատար հավանությանը, իսկ ճապոնական պատվի-

բակության ղեկավարը դա պատիվ համարեց իր երկրի համար և խոստացավ ամեն ինչ անել ապահովելու հաջորդ կոնգրեսի հաջող անցկացումը իր երկրի մայրաքաղաքում։

Մոսկովյան կոնգրեսի ավարտումից անմիջապես հետո, կոնտակտները խորհրդային գիտնականների հետ ավելի սերտացնելու և մեր երկրի ժողովուրդների կյանքին, մշակույթին ու ձգտումներին մոտիկից ծանոթանալու նպատակով, օտարերկրյա գիտնականները առանձին մեծ ու փոքր խմբերով կամ անհատապես շրջագայություններ կատարեցին Մոսկվայում, Լենինգրադում, Ռուսաստանի ֆեդերացիայում, Ուկրաինայում, Մերձբալթյան, Միջինասիական և Անդրկովկասյան հանրապետություններում։

Պատվիրակների մի մեծ խումբ, շուրջ քառասուն հոգի, ժամանելով Երևան, եռօրյա շրջագայություն կատարեց հանրապետության տեսարժան վայրերում՝ այցելեց գիտական հաստատությունները, թանգարանները, Մատենադարան, դիտեց ճարտարապետական կոթողները, ծանոթացավ Երևան քաղաքին, զրույցներ ունեցավ հայ գրչակիցների հետ, փոխանակեց գրականություն։ Այդ խմբի մեջ մտնում էին գիտնականներ ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Անգլիայից, ԴՖՌ-ից, Նորվեգիայից, Ճապոնիայից և Պորտուգալիայից, Քեմբրիջի համալսարանի պրոֆեսոր, հայտնի ազգագրագետ Մ. Ֆորտեսի գլխավորությամբ։ Հայաստանում եղան նաև կոնգրեսի մասնակից ուրիշ գիտնականներ Լեհաստանից, Ռումբարիայից և Իսրայելից։

Կոնգրեսը և տարբեր երկրների մեծաքիվ գիտնականների անձնական շփումները խոշոր չափով նպաստեցին փոխադարձաբար ավելի լավ ճանաչելու մարդաբանական և ազգագրական գիտությունների զարգացման արդի մակարդակը և կոնկրետ նվաճումները, ինչպես Խորհրդային Միությունում, նույնպես և արտասահմանում։ Կոնգրեսի մասնակիցները ավելի պարզ պատկերացում կազմեցին գիտության այս ճյուղերում եղած հիմնական ուղղությունների, խորհրդային գիտության մեթոդաբանական հիմունքների, ինչպես և առաջիկա խնդիրների վերաբերյալ։ Կոնգրեսի աշխատանքները, անշուշտ, կխթանեն գիտական առանձին պրոբլեմների, նույնիսկ բնագավառների հետագա զարգացմանը և, որ կարևորն է, զգալի դեր կխաղան ժողովուրդների փոխըմբռնման, բարեկամության և գիտության ու մշակույթի առաջադիմության ճանապարհին։

Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ